

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0512` <<ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ>>
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ՆԿԱՐԻՉ, ԴԱՍԱՎԱՆՊՈՂ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Հ/Հ	Անվանումը	Նկարագիրը
1	2	3
1.	Մասնագիտության (որակավորման) անվանումը և կոդը	Մասնագիտությունը` 2-90.03.02 <<Գեղանկարչություն>> որակավորումը` 2-90.03.02.01-4 <<Նկարիչ, դասավանդող>>:
2.	Դերը	Նկարիչը ստեղծում է գծանկարչական և գեղանկարչական ստեղծագործություններ, Կատարում է հաստոցային, մանրանկարչական և մոնումենտալ բնույթի ստեղծագործական պատվերներ Չբաղվում է անհատական ստեղծագործական գործունեությամբ Իր աշխատանքներով մասնակցում է ստեղծագործական ծրագրերի և ցուցահանդեսների Իր աշխատանքներով հանդես է գալիս տարբեր ցուցասրահներում Չբաղվում անհատական ձեռներեցությամբ Նկարիչ, դասավանդողը ստեղծում է կերպարվեստի ստեղծագործություններ, դասավանդում է գեղարվեստական կրթության` արվեստի մանկական դպրոցներում, մանկական գեղարվեստական դպրոցներում, լրացուցիչ կրթական այլ հիմնարկներում, հանրակրթական հիմնարկներում, հատուկ մասնագիտական կրթական հիմնարկներում, զբաղվում է ուսումնական, առարկայական և կրթական ծրագրերի մշակման աշխատանքներով:
3.	Խնդիրների բնագավառը և աշխատանքային գործընթացները	
3.1.	Բնագավառ 1.	Ստեղծագործական և կատարողական գործունեության իրականացում
	Աշխատանքային գործընթացները	1) պատկերում է մարդուն և շրջապատող առարկայատարածական միջավայրը` ակադեմիական նկարի և գեղանկարչության միջոցով, 2) կիրառում է գեղարվեստական ձևի կառուցման օրինաչափությունների և դրա ընկալման յուրահատկությունների մասին գիտելիքները, 3) կազմակերպում է սեփական գործունեություն, որոշել մասնագիտական խնդիրների կատարման մեթոդները և եղանակները, գնահատել դրանց արդյունավետությունն ու որակը:
3.2.	Բնագավառ 2.	Մշակույթային և կրթական գործունեության իրականացում
	Աշխատանքային գործընթացները	1) աշխատանք է տանում նախապատրաստական նյութի նպատակային հավաքի, վերլուծության, ամփոփման և կիրառման ուղղությամբ, 2) հետևողական աշխատանք է տանում կոմպոզիցիայի վրա, 3) տիրապետում է կերպարվեստի աշխատանքների կատարման բոլոր հնարքներին, 4) օգտագործում է համակարգչային տեխնոլոգիաներ` ստեղծագործական մտահղացման ժամանակ, 5) գտնում է նոր կերպարապլաստիկ լուծումներ` յուրաքանչյուր ստեղծագործական խնդրի համար:
3.3.	Բնագավառ 3.	Մանկավարժական գործունեության իրականացում
	Աշխատանքային գործընթացները	1) իրականացնում է մանկավարժական և ուսումնասնաթղթական գործունեություն` արվեստի

		<p>մանկական դպրոցներում, մանկական գեղարվեստական դպրոցներում, լրացուցիչ կրթական այլ հիմնարկներում, ընդհանուր կրթական հիմնարկներում, հատուկ մասնագիտական կրթական հիմնարկներում,</p> <p>2) օգտագործում է հոգեբանության և մանկավարժության, հատուկ և տեսական առարկաների բնագավառի գիտելիքներ՝ դասավանդման գործունեությունում,</p> <p>3) օգտագործում է ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերլուծության, դասի պատրաստման և անցկացման մեթոդիկայի բազային գիտելիքները և գործնական փորձը,</p> <p>4) կիրառում է դասավանդման դասական և ժամանակակից մեթոդները,</p> <p>5) օգտագործում է անհատական մեթոդներ և աշխատանքի հնարքներ,</p> <p>6) պլանավորում է սովորողների մասնագիտական հմտությունների զարգացումը,</p> <p>7) տիրապետում է բանավոր և գրավոր խոսքի մշակույթին, մասնագիտական տերմինաբանությանը:</p>
4.	Պատասխանատվությունը	Պատասխանատու է կրթական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման համար՝ արվեստի մանկական դպրոցներում, մանկական գեղարվեստական դպրոցներում, լրացուցիչ կրթական այլ հիմնարկներում, ընդհանուր կրթության հիմնարկներում, հատուկ մասնագիտական կրթական հիմնարկներում:
5.	Բարդության աստիճանը	Նկարիչ դասավանդողը կատարում է միջին բարդության աշխատանքներ

<p>6.</p> <p>6.1.</p>	<p>Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ</p> <p>Մասնագիտական գիտելիքներ</p>	<p>Պետք է իմանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) արվեստի հիմնական տեսակները և ժանրերը. 2) համաշխարհային գեղարվեստական մշակույթի ուղղությունները և ոճերը. 3) համաշխարհային գեղարվեստական մշակույթի գլուխգործոցները. 4) պատմագեղարվեստական գործընթացի հիմնական փաստերը և օրինաչափությունները, արվեստի կոնկրետ ստեղծագործությունների և գեղարվեստական պրակտիկայի երևույթների վերլուծման սկզբունքները. 5) երկրաչափական ձևերի և մարմինների կառուցման հիմունքները. 6) ստվերների կառուցման տեսության հիմունքները. 7) հարթության վրա տարածական կառուցումների հիմնական մեթոդները. 8) գծային հեռանկարի օրենքները. 9) կոմպոզիցիայի տեսական հիմունքները, գեղարվեստական ձևի կառուցման օրինաչափությունները և դրա ընկալման յուրահատկությունները. 10) գեղանկարչության հիմնական տեխնիկական տարատեսակները, գործառույթները և հնարավորությունները. 11) դասական գեղարվեստական ժառանգության և ժամանակակից գեղարվեստի գործնական փորձը. 12) նախապատրաստական նյութի հավաքման և համակարգման սկզբունքները և ստեղծագործական մտահղացման մարմնավորման համար դրա կիրառման եղանակները. 13) մանկավարժության հիմունքները. 14) ստեղծագործական գործընթացի հոգեբանամանկավարժական տեսանկյունները. 15) Հայաստանում գեղարվեստական կրթության ավանդույթները. 16) գեղարվեստական կրթության հիմնարկներում ուսումնական աշխատանքի պլանավորման և անցկացման մեթոդները;
<p>6.2.</p>	<p>Մասնագիտական կարողություններ</p>	<p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) ճանաչել ուսումնասիրված ստեղծագործությունները և դասել դրանք՝ ըստ որոշակի դարաշրջանի, ոճի, ուղղության. 2) օգտվել համաշխարհային գեղարվեստական մշակույթի մասին տարատեսակ պատմական տեղեկատվությունից. 3) կատարել ուսումնական և ստեղծագործական առաջադրանքներ (գեկույցներ, հաղորդագրություններ). 4) օգտագործել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները՝ գործնականում և առօրյա կյանքում. իր

		<p>մշակութային զարգացման ուղիները գտնելու, անձնական ու կոլեկտիվ հանգստի կազմակերպման, դասական ու ժամանակակից արվեստի ստեղծագործությունների մասին սեփական դատողություններն արտահայտելու, ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործության,</p> <p>5) հասկանալ իր ապագա մասնագիտության էությունն ու սոցիալական արժեքը, դրա նկատմամբ արտահայտել կայուն հետաքրքրություն.</p> <p>6) կազմակերպել սեփական գործունեություն, որոշել մասնագիտական խնդիրների կատարման մեթոդները և եղանակները, գնահատել դրանց արդյունավետությունն ու որակը.</p> <p>7) լուծել հիմնախնդիրները, ոչ ստանդարտ իրավիճակներում գնահատել ռիսկերը և կայացնել որոշումներ.</p> <p>8) իրականացնել մասնագիտական խնդիրների առաջադրման և լուծման, մասնագիտական ու անհատական զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության որոնում, վերլուծություն և գնահատում.</p> <p>9) օգտագործել տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներ՝ մասնագիտական գործունեության կատարելագործման համար.</p> <p>10) աշխատել կոլեկտիվում, ապահովել նրա համախմբումը, արդյունավետ ձևով շփվել գործընկերների, ղեկավարության հետ.</p> <p>11) դնել նպատակներ, հիմնավորել ենթակայաների գործունեությունը, կազմակերպել և վերահսկել նրանց աշխատանքը՝ իր վրա վերցնելով խնդիրների կատարման արդյունքների պատասխանատվությունը.</p> <p>12) ինքնուրույն որոշել մասնագիտական ու անհատական զարգացման խնդիրները, զբաղվել ինքնակրթությամբ, գիտակցորեն պլանավորել որակավորման բարձրացումը.</p> <p>13) կողմնորոշվել մասնագիտական գործունեության տեխնոլոգիաների հաճախակի փոփոխման պայմաններում.</p> <p>14) ճանաչել ուսումնասիրված ստեղծագործությունները և դասել դրանք՝ ըստ որոշակի դարաշրջանի, ոճի, ուղղության,</p> <p>15) որոշել արվեստի տարբեր տեսակների ստեղծագործությունների միջև ոճային ու բովանդակային կապերը.</p> <p>16) օգտվել համաշխարհային գեղարվեստական մշակույթի մասին տարատեսակ պատմական տեղեկատվությունից.</p> <p>17) կատարել ուսումնական և ստեղծագործական առաջադրանքներ (զեկույցներ, հաղորդագրություններ).</p> <p>18) օգտագործել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները՝ գործնականում և առօրյա կյանքում. իր մշակութային զարգացման ուղիները գտնելու, անձնական ու կոլեկտիվ հանգստի կազմակերպման, դասական ու ժամանակակից արվեստի ստեղծագործությունների մասին սեփական դատողություններն արտահայտելու, ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործության,</p> <p>19) որոշել արվեստում տարբեր դարաշրջանների և ուղղությունների ոճային առանձնահատկությունները.</p> <p>20) կիրառել արվեստի պատմության գիտելիքները՝ գերարվեստանախագծային գործում և դասավանդման գործունեությունում.</p> <p>21) կիրառել գերարվեստանախագծային գործի և դասավանդման գործունեության հեռանկարի տեսական գիտելիքները.</p>
--	--	---

		<p>22) տեխնիկապես հմտորեն կատարել Էսբիզ. 23) գտնել նոր կերպարապլաստիկ լուծումներ՝ յուրաքանչյուր ստեղծագործական խնդրի հնար. 24) մանկավարժական գործունեությունում օգտագործել անձի և միջանձնական հարաբերությունների մասին տեսական տվյալները;</p>
7.	Ընդհանուր ոչ մասնագիտական գիտելիքներ և կարողություններ	
7.1.	Ընդհանուր ոչ մասնագիտական գիտելիքներ	<p>Պետք է իմանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) ՀՀ սահմանադրությունը. 2) մասնագիտական գործունեության բնագավառում աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման վերաբերյալ օրենսդրական ակտերի և նորմատիվ այլ փաստաթղթերի դրույթները. 3) իր ընտրած մասնագիտության էությունն ու հասարակական նշանակությունը և դրա նկատմամբ ցուցաբերի մշտական հետաքրքրություն. 4) տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության հիմնական օրենքները. 5) արտադրանքի (ծառայությունների) գնագոյացման մեխանիզմները, աշխատանքի վարձատրության ժամանակակից ձևերը. 6) կազմակերպության արտադրատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշները, նյութատեխնիկական և աշխատանքային պաշարները, տեխնիկատնտեսական ցուցանիշների հաշվարկման և բիզնես պլանի մշակման մեթոդակարգը. 7) աշխատանքի կազմակերպման և կառավարման հիմունքները, կոլեկտիվում գործնական շփման սկզբունքները. 8) շուկայաբանության ռազմավարությունը և քաղաքականությունը. 9) տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կազմությունը, գործառույթները և մասնագիտական գործունեությունում օգտագործման հնարավորությունները. 10) մաթեմատիկայի հիմնական կանոնները՝ ավագ դպրոցի ծրագրի շրջանակում. 11) հայոց գրական լեզվի և շարահյուսության կանոնները. 12) երկու օտար լեզուներ (պարզ շփման մակարդակով). 13) համաշխարհային մշակույթի ժամանակակից ձեռքբերումները. 14) Էթիկայի հիմնական հասկացությունները և փոխհարաբերությունների կառուցման բարոյական նորմերն ու սկզբունքները. 15) տեխնածին և տարերային արտակարգ իրավիճակներում տնտեսության օբյեկտների կայունության ապահովման սկզբունքը. 16) տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու կանոնները. 17) շրջակա միջավայրի բնօգտագործման և բնապահպանական անվտանգության իրավական ու սոցիալական հիմնախնդիրները:
7.2.	Ընդհանուր ոչ մասնագիտական կարողություններ	<p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) պաշտպանել իր իրավունքները՝ իրավական և նորմատիվ փաստաթղթերին համապատասխան.

		<p>2) միջանձնային հարաբերությունների կառուցման ժամանակ պահպանել էթիկայի նորմերը, օգտվել վարքագծի ինքնակառավարման մեթոդներից.</p> <p>3) վերլուծել աշխատանքային իրադրությունը և կազմակերպել սեփական գործունեությունը՝ ելնելով տրված նպատակից և դրան հասնելու եղանակներից.</p> <p>4) հաղորդակցվել երկու օտար լեզուներով (պարզ շփման մակարդակով).</p> <p>5) կիրառել մաթեմատիկական կանոնները՝ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ.</p> <p>6) մասնակցել արտադրամասի (տեղամասի) տեխնիկատնտեսական ցուցանիշների հաշվարկման և բրզնես պլանի կազմման գործընթացներին.</p> <p>7) օգտագործել շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը մասնագիտական գործունեությունում.</p> <p>8) օգտագործել կիրառական ծրագրեր, համակարգչային և հաշվիչ տեխնիկա՝ մասնագիտական խնդիրների լուծման համար.</p> <p>9) իրականացնել վնասվածքավտանգ և վնասակար գործոնների վերլուծություն մասնագիտական գործունեությունում.</p> <p>10) ապահովել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի, հիգիենայի և հրդեհային պաշտպանության կանոններից ու նորմերից բխող պահանջները՝ մասնագիտական գործունեությունում.</p> <p>11) կազմակերպել և անցկացնել միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակների և տարերային աղետների վնասակար ազդեցություններից աշխատողներին պաշտպանելու համար.</p> <p>12) տուժածներին ցուցաբերել առաջին բուժօգնություն.</p> <p>13) կիրառել բնապահպանական և կենսասանվտանգ տեխնիկա:</p>
8.	Որակավորման մակարդակը	ՈՄ - 5
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք		
Լեզուները	<ul style="list-style-type: none"> - Դայերեն գերազանց - Առաջին օտար լեզու՝ B1 - Երկրորդ օտար լեզու՝ B2 	
Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> - MS Word՝ բավարար - MS Excel՝ բավարար - MS PowerPoint՝ բավարար - Internet Explorer՝ բավարար 	
Գիտելիքը	<p>արվեստի պատմության, գծանկարի և գեղանկարի հիմունքներ, հայ արվեստի պատմության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, գծագրական գործիքները, գծագրի կատարման կանոնները, մանրանկարչական դպրոցները, մարդու մարմնի համաչափության օրենքներն ու օրինաչափությունները, հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, գործառույթները և բնագավառները, անձի ճանաչողական /իմացական/ գործընթացները, մանկավարժության առարկան, խնդիրները, գործառույթները, մանկավարժության պատմության գիտության զարգացման փուլերը, դաստիարակության մեթոդները, դրանց դասակարգումն ու կիրառման հնարավորությունները ամբողջական մանկավարժական գործընթացում,</p>	

	<p><<Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա>> առարկայի տեսական հիմունքները, Կերպարվեստ առարկային ներկայացված չափորոշչային պահանջները, գծանկարի հիմունքներ, նկարչական աշխատանքների ընդունված չափերը, նյութերը և մատուցման ձևերը, գծանկարում կիրառվող նյութերի տեխնիկական հնարավորությունները, գունկարչության հիմունքներ, կոմպոզիցիայի հիմունքներ, ընդանուր գաղափար անհատական ստեղծագործական գործունեության վերաբերյալ:</p>
<p>Վերաբերմունքը</p>	<p>Մտածող, պարկեշտ, անկաշկանդ, պարտաճանաչ, պատասխանատու, պահանջկոտ, կարգապահ, հաղորդակցվող, մաքրասեր, տեղեկացված, համեստ, հարգալից, նորարար, ընկերասեր, գեղարվեստական ճաշակ և ստեղծագործական երևակայություն ունեցող: Ցուցաբերի արվեստի նկատմամբ հետաքրքրություն և սեր</p>